



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
21-րդ դարի մարտահրավերներ
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԽՈՐԵՆ ՄԻՒԹԱՐՅԱՆ - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,
շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մատչում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

The article focuses on the study of the food problem in global economy. Different comments were presented about food issue, as well as there was defined the meaning of "food security". In article have been examined the factors underlying the problems of food issues in particular demographic factors and structural changes of household expenditures. Special attention was paid phenomenon of "agflatsia", which is the main reason of the food crises.

ՆԱՐԵԿ ՍԱՐԱՏԻԿՅԱՆ

Դասախոս, ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ

ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐՈՎ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Հիմնաբառեր. *տնտեսություն, գիտելիքահենք տնտեսություն, մեթոդաբանություն, գնահատում, համաթիվ, կայուն զարգացում, գիտություն, կրթություն, գիտելիքի համաթիվ, ՀՆԱ*

Ժամանակակից շուկայական հարաբերություններում տեղի են ունենում անընդհատ փոփոխություններ: Գոյություն ունեցող ավանդական տնտեսական հարաբերություններին հետզհետե փոխարինելու են գալիս նոր համակարգեր ու մոտեցումներ:

Ժամանակակից տնտեսական համակարգն ընդունված է անվանել նոր տնտեսություն կամ գիտելիքահենք տնտեսություն:

Գիտելիքահենք տնտեսությունը, ի տարբերություն ավանդական համակարգի, ունի մի շարք տարբերություններ, որոնցից են դրա չափման ձևը և միավորները:

Գոյություն ունեն տարբեր մեթոդներ, որոնց միջոցով չափվում է գիտելիքահենք տնտեսությունը և ցույց է տրվում նրա զարգացվածության մակարդակը:

Սույն հոդվածում ներկայացրել ենք ԳՀՏ չափման մեթոդները և դրանք օգտագործել ՀՀ ԳՀՏ չափման համար:

Ժամանակակից շուկայական հարաբերություններում տեղի են ունենում անընդհատ փոփոխություններ: Գոյություն ունեցող ավանդական տնտեսական հարաբերություններին հետզհետե փոխարինելու են գալիս նոր համակարգեր ու մոտեցումներ:

Նոր տնտեսական համակարգը ընդունված է անվանել գիտելիքահենք տնտեսություն, որտեղ վճռորոշ դեր են կատարում գիտելիքը և նորարարությունը: Մի շարք երկրներ արդեն անցում են կատարել դեպի գիտելիքահենք տնտեսություն կամ գտնվում են անցումային փուլում: Բացառություն չէ նաև ՀՀ-ն, որտեղ ռազմավարական պլանավորմամբ նախատեսվում է անցում կատարել գիտելիքահենք տնտեսության: Գիտելիքահենք տնտեսությունը լավագույն տարբերակն է տնտեսությունը զարգացնելու համար, սակայն հնարավոր չէ որևէ գործընթաց սկսել ընդամենը մեկ որոշումով: Դրա համար անհրաժեշտ են որոշակի պայմաններ, ինչպես նաև գիտելիքահենք տնտեսության առանձին գործոնների գնահատում, ինչը հնարավորություն կտա պատկերացում կազմել ՀՀ տնտե-

սության ներկա վիճակի մասին, բացահայտելու այն հիմնական ուղղությունները, որոնք պահանջում են առանձնահատուկ մոտեցումներ:

Այսօր մի շարք կազմակերպություններ և գիտնականներ փորձում են գտնել մեկ ընդհանուր մոտեցում, բանաձև, մոդել, ինչը թույլ կտա գնահատել գիտելիքահենք տնտեսությունը: Գոյություն ունեն բազմաթիվ մոդելներ և մոտեցումներ, որոնցով գնահատվում է գիտելիքահենք տնտեսությունը: Տարածված և արդյունավետ են Scandia Navigator, Balanced Scorecard, Inangible Assets Monitor, IC-Index Model and HVA Model, Technology Broker Model մոդելները:

Համաշխարհային պրակտիկայում գոյություն ունեն նաև այլ տարածված մոդելներ, որոնք մշակել են Համաշխարհային բանկը, ՏՀԶԿ-ն, ԵՄ-ը և այլ կազմակերպություններ:

Համաշխարհային բանկի մասնագետների մշակած KAM (knowledge assessment methodology – գիտելիքի գնահատման մեթոդաբանություն) մոդելը հնարավորություն է տալիս նախնական գնահատման ենթարկելու երկրի գիտելիքի տնտեսությունը:

Հիմք ընդունելով տարբեր գործոններ և փոփոխականներ՝ Համաշխարհային բանկի մասնագետները, «Գիտություն հանուն զարգացման» ծրագրի շրջանակներում, մշակել են մեթոդաբանություն, որը ներկայացնում է ՏՀԶԿ և մնացած երկրների գիտելիքի տնտեսության ինդեքսը: Հետազոտության համար հիմք են հանդիսացել հետևյալ 4 գործոնները.


- *տնտեսական և ինստիտուցիոնալ ռեժիմ*, որն ապահովում է գոյություն ունեցող ու նոր գիտելիքի արդյունավետ օգտագործման և ձեռնարկատիրության բարգավաճման խթաններ,
- *կրթություն և հմտություններ*, որոնք անհրաժեշտ են բնակչությանը գիտելիք ստեղծելու, տարածելու և օգտագործելու համար,
- *ընկերությունների*, հետազոտական կենտրոնների, համալսարանների, ուղեղային կենտրոնների, խորհրդատվական և այլ կազմակերպությունների արդյունավետ նորաստեղծական համակարգ, որն ունակ կլինի բացահայտելու գլոբալ գիտելիքի աճող պաշարը, վերափոխելու և հարմարեցնել այն սեփական կարիքներին և ստեղծելու նոր տեխնոլոգիա,
- *տեղեկատվական և հեռահաղորդակցային ենթակառուցվածք*, որն անհրաժեշտ է արդյունավետ հաղորդակցության, տեղեկատվության տարածման ու մշակման դյուրացման համար¹:

Վերոնշյալ գործոնները հիմք են գիտելիքահենք տնտեսության ինդեքսի գծապատկեր ստանալու համար (գծապատկեր 1)¹ ըստ Համաշխարհային բանկի Development Data Platform (DDP)-ի և միջազգային մյուս կազմակերպությունների զեկույցների, հետազոտությունների արդյունքների տեղեկատվության²:

¹ Measuring Knowledge in the World's Economies: Knowledge Assessment Methodology and Knowledge Economy Index: KNOWLEDGE FOR DEVELOPMENT PROGRAM: World Bank Institute, p.1.

² In KAM 2012, the key variable “average years of schooling” replaces “adult literacy rate” in the education index. The 1995 and 2000 indexes have also been recalculated to allow for comparison.

KAM գիտելիքի ինդեքսը /KI-ԳԻ/ չափում է գիտելիքի ստացման և տարածման պետության կարողությունները: Այս մեթոդաբանությունը հիմնականում արտահայտում է որևէ երկրի կամ տարածաշրջանի հնարավորությունները՝ հիմք ընդունելով գիտելիքահենք տնտեսության հետևյալ երեք փոփոխականը. կրթություն և մարդկային կապիտալ, նորաստեղծական համակարգ, տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաներ (ICT)¹:



Գծապատկեր 1. Գիտելիքի ինդեքսի մոդել²

Աղյուսակ 1

Գիտելիքի տնտեսության ինդեքս, 2012 թ.

1	Շվեդիա	9.43
2	Ֆինլանդիա	9.33
3	Դանիա	9.16
4	Հոլանդիա	9.11
5	Նորվեգիա	9.11
6	Նոր Զելանդիա	8.97
7	Կանադա	8.92
8	Գերմանիա	8.9
9	Ավստրալիա	8.88
10	Շվեյցարիա	8.87
55	Ռուսաստան	5.78
68	Վրաստան	5.19
69	Թուրքիա	5.16
71	Հայաստան	5.08
79	Ադրբեջան	4.56
94	Իրան	3.91

¹ [http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/WBI/WBIPROGRAMS/KFDLP/EXTUNIKAM/0, contentMDK:20584278~menuPK:1433216~pagePK:64168445~piPK:64168309~theSitePK:1414721,00.html](http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/WBI/WBIPROGRAMS/KFDLP/EXTUNIKAM/0,contentMDK:20584278~menuPK:1433216~pagePK:64168445~piPK:64168309~theSitePK:1414721,00.html)

² Knowledge Economy Index (KEI) 2012 Rankings.

Գիտելիքի տնտեսության ինդեքսը (KEI-ԳՏԻ) ցույց է տալիս, թե արդյոք շրջակա միջավայրը նպաստում է գիտելիքահենք տնտեսության արդյունավետ և զարգացած լինելուն: Սա ցուցանիշների մի համախումբ է, որը ցույց է տալիս դեպի գիտելիքահենք տնտեսություն երկրի կամ տարածքների զարգացվածությունը բոլոր մակարդակներում:

Գիտելիքի տնտեսության ինդեքսի վերջին տվյալները վերաբերում են 2012 թվականին:

Ներկայացված աղյուսակից երևում է, որ, ըստ Համաշխարհային բանկի տվյալների, գիտելիքի տնտեսության մեջ առաջատար տեղ են զբաղեցնում Շվեդիան (9.43), Դանիան (9.33) և Ֆինլանդիան (9.16): Սրանք այն պետություններն են, որոնք հիմնական շեշտադրումը կատարել են գիտության և տեխնոլոգիաների վրա՝ այդպիսով ապահովելով կայուն տնտեսական զարգացում և համեմատաբար «անտարբեր» մոտեցում նավթային կամ այլ ռեսուրսների շուկաներում տեղի ունեցող տատանումների նկատմամբ:

Աղյուսակ 2

Ըստ Համաշխարհային բանկի ԳՏՀ աստիճանակարգման լավագույն տասը երկրների և Հայաստանի ցուցանիշները, 2008 թ.¹

	ԳՏՀ	ԳՀ	Տնտեսական և ինստի- տյունային ռեժիմ	Նորաստեղծ.	Կրթություն	ՏՀՏ
Դանիա	9.58	9.56	9.66	9.57	9.79	9.32
Շվեդիա	9.56	9.69	9.18	9.79	9.44	9.83
Ֆինլանդիա	9.37	9.34	9.47	9.66	9.77	8.59
Հոլանդիա	9.30	9.34	9.18	9.47	9.21	9.32
Նորվեգիա	9.29	9.30	9.25	9.06	9.59	9.24
Կանադա	9.14	9.05	9.42	9.43	9.24	8.47
Շվեյցարիա	9.13	9.00	9.50	9.89	7.76	9.36
ԱՄՆ	9.10	9.09	9.16	9.45	8.79	9.02
Ավստրալիա	9.09	9.23	8.66	8.71	9.66	9.32
Գերմանիա	9.01	9.01	8.99	9.00	9.17	8.86
Հայաստան	5.41	5.31	5.71	6.17	6.05	3.71

Իսկ ահա Հայաստանն այս ցուցակում զբաղեցնում է 71-րդ տեղը՝ զգալիորեն զիջելով առաջատար երկրներին: Հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ, ի տարբերություն հարևան երկրների, որոնք բարելավել են որոշ ցուցանիշներ, Հայաստանը տարբեր պատճառներով զիջել է իր դիրքերը՝ -13:

Համաշխարհային բանկի 2008 թ. հաշվետվություններից կարելի է պատկերացում կազմել ՀՀ գիտելիքի տնտեսության տարբեր գործոնների վերաբերյալ:

Ներկայացված աղյուսակից հստակ երևում է, որ գիտելիքահենք տնտեսության կարևոր չորս գործոններով Հայաստանը բավական զիջում է համաշխարհային առաջատարներին: Բնականաբար, այս պարագայում, քանի դեռ հիմնական շարժիչ ուժերը թույլ են զարգացած, մրցունակ գիտելիքահենք տնտեսության կառուցումը ոչ միայն դժվար, այլև անհնարին կլինի:

¹ www.worldbank.org/eca/ke

Նորաստեղծական և կրթական համակարգերի միջև կարելի է որոշակի զուգահեռներ անցկացնել: Եթե կրթական համակարգը չի թարմացվում և չի շարժվում ժամանակին համընթաց, ապա թողարկվող կադրերից նորաստեղծական բարձր արդյունքներ սպասելը, բնականաբար, անիրատեսական է:

Աղյուսակ 3

Համացանցից օգտվողներ (տոկոսային արտահայտությամբ), 2017 թ.¹

Երկիր	Համացանցից օգտվողներ
Դանիա	94.6
Շվեդիա	94.8
Ֆինլանդիա	91.5
Հոլանդիա	94.0
Նորվեգիա	95.0
Կանադա	94.7
Շվեյցարիա	86.7
ԱՄՆ	86.9
Ավստրալիա	86.9
Գերմանիա	86.2
Հայաստան	70.1

Հարցին, թե ինչպես շարժվել ժամանակին համընթաց և ձեռքը միշտ պահել աշխարհի զարկերակին այսօրվա տնտեսաքաղաքական պայմաններում, կա հստակ պատասխան՝ **համացանց**: Այսօր, օգտվելով համացանցից, հաշված վայրկյանների ընթացքում կարելի է գտնել ցանկացած տեղեկատվություն և փոխանակել միլիոնավոր տվյալներ: Այլ կերպ ասած, տեղեկատվական համակարգերը և համացանցը դարձել են ժամանակակից աշխարհի, ինչպես նաև գիտելիքահեղինք տնտեսության ամենակարևոր բաղադրիչները: Ցավոք, այս պարագայում նույնպես Հայաստանը դեռևս շատ անելիքներ ունի:

ԱՄՆ-ում շատ հաճախ «գիտելիքահեղինք տնտեսություն» հասկացությանը զուգահեռ օգտագործվում է «նոր տնտեսությունը»:

Դա սկսվեց ԱՄՆ-ի յուրաքանչյուր նահանգի համար նոր տնտեսության ազգային համաթվի (New Economy Index) ձևավորման նախագծի մեկնարկով, որն այնուհետև հիմք ծառայեց Գլոբալ նոր էլ-տնտեսության համաթվի համար (Global New E-Economy Index):

Ընդհանուր առմամբ, համակարգը բաղկացած է 25 գործոնից՝ ընդգրկված 5 բաժնում.

1. Գիտելիքային աշխարհագրություն: Չափման միավորներում ներառված են ՏՏ մասնագետների զբաղվածությունը և աշխատատեղերը, կրթության հասանելիությունն ամբողջ աշխատուժին, մտավոր աշխատողների ներգաղթը, զբաղվածությունը բարձր ավելացված արժեքով հատվածներում, զբաղվածությունը բարձր վարձատրությամբ առևտրային ծառայություններում:

2. Գլոբալացում: Հաշվարկվում է ըստ ընդհանուր արտադրանքի և ծառայությունների արտահանման, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների չափի:

¹ <http://www.internetworldstats.com/list2.htm#a-c>

3. Տնտեսական դինամիզմ: Չափվում են արագ աճող «գազելային» ընկերությունների քանակը, աշխատատեղերի իրացման աստիճանը (որով նոր բիզնեսը մեկնարկում է, գոյություն ունեցողը՝ տապալվում), մեկնարկային արժեթղթերի վաճառքը կազմակերպությունների կողմից /IPOs/:

4. Թվային տնտեսություն: Հաշվարկվում է, թե պետությունը, ծառայություններ մատուցելու համար, ինչ մակարդակում է օգտվում տեղեկատվական տեխնոլոգիաներից, ինչպես նաև որոշվում օնլայն բնակչության քանակը, համակարգիչների և համացանցի օգտագործման աստիճանը կազմակերպությունների կողմից, լայնաշերտ հեռահաղորդակցության մատչելիությունը բնակչությանը և բիզնես ոլորտին, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման մակարդակը առողջապահության ոլորտում:

5. Նորաստեղծական կարողություններ (Innovation capacity): Հաշվի են առնվում աշխատատեղերի քանակը բարձր տեխնոլոգիաների արտադրության, հեռահաղորդակցության և բժշկության ոլորտներում, գիտաշխատողների և ինժեներների, պատենտների, արդյունաբերական և ոչ արդյունաբերական հետազոտությունների թիվը, զարգացման նպատակով կատարված ներդրումների մեծությունը, անցումը դեպի մաքուր էներգիան և վենչուրային կապիտալի ներդրումը¹:

Վերոնշյալ մոտեցումով գնահատվեց ԱՄՆ-ի յուրաքանչյուր նահանգ:

ՀՀ տարածքային զարգացածության մակարդակը չափելու համար ՀՊՏՀ հետազոտական խմբի կողմից կատարված «Տարածական զարգացում» աշխատության մեջ փորձ է արվել համադրել մի շարք տվյալներ և կիրառելով տարբեր բանաձևեր: Մասնավորապես՝ այդ աշխատության մեջ առաջարկվում է չափումները իրականացնել հետևյալ ցուցանիշներով.

1. Ժողովրդագրական համաթիվ,
2. Նորարարության համաթիվ,
3. մրցունակության համաթիվ,
4. տնտեսական զարգացման համաթիվ,
5. սոցիալական զարգացման համաթիվ²:

Կիրառված հատուկ բանաձևերի միջոցով ստացվել է հետևյալ պատկերը (աղյուսակ 4):

Կատարված աշխատանքները հնարավորություն են տալիս գնահատելու յուրաքանչյուր մարզի զարգացման համաթիվը և հստակ պատկերացում կազմելու առկա խնդիրների մասին: Ունենալով այս արդյունքները՝ պետական մարմինները կարող են տեսնել այն հիմնահարցերը, որոնք գոյություն ունեն մարզային տարբեր ոլորտներում և իրականացնել ուղղորդված տնտեսական քաղաքականություն՝ խթանելով տնտեսական աճը:

¹ The 2014 State New Economy, Index | Information Technology and Innovation Foundation, Washington 2014, p.6.

² Տարածական զարգացում, Կ. Գրիգորյան և ուրիշ, Եր., «Տնտեսագետ», 2014 («Ամբերդ» մատենաշար), էջ 46:

ՀՀ մարզերի զարգացման համաթիվն ըստ 2011 թ. տվյալների¹

Մարզի անվանումը	Ընդհանուր համաթիվը
Կոտայք	0.55
Արարատ	0.51
Շիրակ	0.47
Արմավիր	0.46
Լոռի	0.441
Սյունիք	0.436
Գեղարքունիք	0.34
Տավուշ	0.30
Արագածոտն	0.29
Վայոց Ձոր	0.16

Այստեղ հնարավոր է կատարել որոշակի փոփոխություններ կամ լրացումներ, մասնավորապես, ընտրված գործոնների առումով, ներառել նաև «նոր տնտեսության» որոշ գործոններ և ստանալ մարզերի գիտելիքահենք տնտեսությանը վերաբերվող արդյունքներ:

«ՏՀՁԿ գիտության, տեխնոլոգիայի և արդյունաբերության միավորների ցանկ – 2007»² զեկույցում ամփոփված վերլուծությունները և գնահատումները հիմնված են 87 փոփոխականի վրա՝ հետևյալ խմբավորմամբ.

- ԳՀԱ-ները և ներդրումները գիտելիքում,
- մարդկային ռեսուրսները գիտության մեջ և տեխնոլոգիայում,
- նորաստեղծական քաղաքականությունը,
- նորաստեղծական կատարողականը,
- տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաները,
- առանձին տեխնոլոգիաները,
- գիտության և տեխնոլոգիայի միջազգայնացումը,
- գլոբալ տնտեսական հոսքերը,
- արտադրողականությունը և առևտուրը:

Ամենամյա այս զեկույցումները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու ՏՀՁԿ երկրների գիտելիքահենք տնտեսության զարգացման վերաբերյալ: Կարևոր է նշել հատկապես այն հանգամանքը, որ ՏՀՁԿ-ն մեծ ուշադրություն է դարձնում տարածքների զարգացմանը: Իսկ այն, որ գիտելիքահենք տնտեսությունը կարևոր դերակատարում ունի տարածքային զարգացման համար, հաստատում է կազմակերպության որդեգրած քաղաքականությունը:

Ինչպես երևում է աղյուսակ 5-ից, գիտության և գիտահետազոտական աշխատանքներում կատարված ներդրումների տեսակարար կշռով Հայաստանը բավական զիջում է

¹ Տարածական զարգացում, Կ. Գրիգորյան և ուրիշ, Եր., «Տնտեսագետ», 2014 («Ամբերդ» մատենաշար), էջ 51:

² OECD Science, Technology and Industry Scoreboard, 2007.

ՏՀԶԿ երկրներին, սակայն ընդհանուր արդյունքներով գերազանցում է Պորտուգալիային և Հունաստանին:

Աղյուսակ 5

ՏՀԶԿ երկրների և ՀՀ ներդրումները գիտելիքում*
(OECD Science, Technology and Industry Scoreboard 2007)

	ԳՀԱ-ների ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ, %	Բարձրագույն կրթությունը ՀՆԱ-ի նկատմամբ, %	Ներդրումները գիտելիքում ՀՆԱ-ի նկատմամբ, %
Պորտուգալիա	0.78	0.83	1.74
Հունաստան	0.64	0.96	1.85
Իռլանդիա	1.19	0.89	2.27
Իտալիա	1.14	0.68	2.38
Իսպանիա	1.12	0.92	2.68
Բելգիա	1.92	0.90	3.41
Ավստրիա	2.21	0.54	3.43
Մեծ Բրիտանիա	1.80	0.70	3.50
ԵՄ	2.02	0.79	3.62
Նիդեռլանդներ	1.84	0.80	3.75
Գերմանիա	2.54	0.73	3.90
Ավստրիա	1.81	1.14	3.94
Ֆրանսիա	2.20	0.95	4.31
Կանադա	2.02	1.60	4.45
ՏՀԶԿ	2.41	1.42	4.91
Դանիա	2.58	1.16	5.10
Ճապոնիա	3.31	0.83	5.33
Ֆինլանդիա	3.49	1.11	5.92
Շվեդիա	3.98	0.93	6.44
ԱՄՆ	2.74	2.36	6.56
Հայաստան	0.23 ¹	0.25 ²	2.4 ³

* **Ծանոթություն:** Բոլոր երկրների տվյալները, բացառությամբ ՀՀ-ից, վերցված են Գ. Վարդանյանի «Գիտելիքահենք տնտեսություն» գրքից (էջ 156): ՀՀ-ին վերաբերող ցուցանիշները ստացվել են՝ ելնելով համապատասխան հղումների վերլուծություններից:

Նման ցուցանիշները վկայում են, որ այսօր ՀՀ տնտեսությունը գիտելիքահենք տնտեսության բնագավառում բավական թույլ է զարգացած և ունի զգալի անելիքներ:

Գիտելիքի հասարակությունը գնահատելու փորձ է արվել ՄԱԿ-ի՝ «Հասկանալ գիտելիքի հասարակությունները» 2005 թ. զեկույցում⁴: Դրա համար օգտագործվել է գիտելիքի հասարակության համաթիվը (Iq), որը սինթետիկ է և որոշվում է հետևյալ չափումներով.

- *հասարակության մտավոր ակտիվների համաթիվ*, որը ներառում է դպրոցական ուսումնառության լրիվ ժամանակահատվածը, կրթություն ստացող մինչև 15 տա-

¹ <http://www.armstat.am/file/doc/99493618.pdf>

² <http://www.minfin.am/index.php?cat=71&lang=1>

³ <http://www.armstat.am/file/doc/99493848.pdf>

⁴ Understanding Knowledge Societies UN. N. Y., 2005.

րեկան դեռահասների թիվը, SS-ներով ու մամուլով բնակչությանը տրամադրվող տեղեկատվության մակարդակը,

- *հասարակության զարգացման հեռանկարայնության համաթիվը*, որը ներառում է հետևյալ գործոնները. առողջապահության վրա կատարվող պետական ծախսեր, գիտահետազոտական աշխատանքների և երկրի նորաստեղծական զարգացման վրա կատարվող պետական ծախսերը, երկրի պաշտպանության նպատակով կատարվող ծախսերի կրճատում, նախնական դպրոցում մեկ ուսուցչին բաժին ընկնող երեխաների քանակ, կորպորացիայից ազատության մակարդակ,
- *հասարակության առաջընթացի համաթիվ*, որը ներառում է հետևյալ գործոնները. մանկամահացության մակարդակ, GINI համաթիվ, բնապահպանական առումով պաշտպանված տարածքի հարաբերակցություն երկրի ընդհանուր տարածքին:

Այս գործոններն ազդում են ինչպես ՄԱԿ-ի ներկայացրած գիտելիքի հասարակության համաթվի (աղյուսակ 6), այնպես էլ վերոնշյալ մյուս համաթվերի ձևավորման վրա:

Աղյուսակ 6

**Ըստ գիտելիքի հասարակության համաթվի՝ երկրների աստիճանակարգումը
(Աղբյուր՝ Understanding Knowledge Societies. UN. N.Y., 2005)**

	Երկիրը	Գիտելիքի հասարակության համաթիվը (ԳՀՀ-ԻԿՏ)
1	Շվեդիա	0.776
2	Դանիա	0.763
3	Նորվեգիա	0.719
4	Շվեյցարիա	0.706
5	Ֆինլանդիա	0.704
6	Ճապոնիա	0.696
7	Գերմանիա	0.696
8	Ավստրիա	0.692
9	Նոր Զելանդիա	0.692
10	ՄԹ	0.688
11	Հայաստան	0.223

Ըստ գիտելիքի հասարակության համաթվի՝ «մեծ ութնյակի» ոչ մի երկիր չի մտնում աշխարհի առաջին հնգյակի մեջ: Դա վկայությունն է այն բանի, որ որոշ երկրներում, որտեղ հարստությունը կուտակվել է արդյունաբերական հասարակության ժամանակներում, ներդաշնակություն ձեռք չի բերվել՝ «ինչպե՞ս գործել» և «ինչպե՞ս գոյատևել» գիտելիքների առումով: Այսինքն՝ եթե հարստության կուտակումը համաձայնեցված չէ սպառման սոցիալապես արդար սկզբունքների հետ (GINI բարձր համաթիվ), ապա զարգացումը սկսում է դանդաղել: Հայաստանի ԳՀՀ-ն կազմել է 0.223: Աղյուսակ 6-ում Հայաստանի աստիճանակարգման փոխարեն դրվել է հարցական նշան, քանի որ դա պարզելու համար կպահանջվեր ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրների տվյալների վերլուծություն¹:

Թեպետ առանց այդ էլ հստակ երևում է, որ Հայաստանը զիջում է առաջատարներին: Նման արդյունքները կրկին հաստատում են այն փաստը, որ այսօր ՀՀ տնտե-

¹ Գիտելիքահենք տնտեսություն, Գ. Վարդանյան, Եր., 2008 թ., էջ 175:

սության մեջ առկա է ոչ միայն խիստ կենտրոնացում, այլև հարստության անհավասարաչափ բաշխում ինչպես բնակչության, այնպես էլ մարզերի միջև:

Այսպիսով, վերլուծելով ԳՀՏ գնահատման միջազգային փորձը, համադրելով ՀՀ տվյալները, փորձ է արվել գնահատելու ՀՀ ԳՀՏ:

Ելնելով գնահատականներից՝ պետք է նշել, որ Հայաստանում այսօր գիտելիքահենք տնտեսությունը չափազանց անբարենպաստ վիճակում է՝ պայմանավորված մի շարք գործոններով, որոնք հնարավորություն չեն տալիս կատարելու զգալի ներդրումներ և ուշադրություն դարձնելու այս ոլորտին: Մասնավորապես.

- կրթական համակարգի փոքր ֆինանսավորում,
- գիտական ոլորտում կատարվող ներդրումների ցածր մակարդակ,
- նորաստեղծության ցածր մակարդակ,
- կենտրոնացման բարձր մակարդակ,
- համացանցի համեմատաբար թույլ զարգացածություն,
- ռեսուրսների անհավասար բաշխում
- ռազմական ծախսերի աճ և այլն:

Ընդունելի է այն մոտեցումը, որ այն երկիրը, որը պատերազմական վիճակում է, չի կարող կրճատել ռազմական ծախսերը, քանի որ դրանք կարևոր նշանակություն ունեն անվտանգության առումով: Սակայն, մեկ նկատառում:

Այսպես՝ 2016 թ. փետրվարի 18-ին Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքվեց վարկային համաձայնագիր՝ ըստ որի Հայաստանը Ռուսաստանից պետք է գնի է 200 մլն դոլարի սպառազինություն և ռազմական տեխնիկա¹:

Մեր խորին համոզմամբ՝ ավելի արդյունավետ և նպատակահարմար կլիներ այդ գումարի գոնե մի փոքր մասը հատկացնել գիտահետազոտական գործունեությանը՝ թեկուզ հենց ռազմական ասպարեզում և ռազմական տեխնիկայի մեծ մասն արտադրել Հայաստանում: Արդյունքում կունենանք տեղական արտադրության տեխնիկա, նոր ներդրումներ տնտեսության մեջ, հնարավորություն՝ վաճառելու արտադրանքը (նման փորձ արդեն իսկ առկա է): Միաժամանակ, կուտակված փորձն ու մասնագետների կարողությունները հնարավոր է ուղղել սպառողական ապրանքների արտադրությանը, ինչպես վարվեցին ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը «սառը պատերազմի» տեմպերի թուլացմանը զուգահեռ:

НАРЕК САРАТИКЯН

ЭКОНОМИКА, ОСНОВАННАЯ НА ЗНАНИИ В ЦИФРАХ (НА ПРИМЕРЕ РА)

Ключевые слова: экономика, экономика, основанная на знаниях, методика, измерения, стабильное развитие, образование, наука, ВВП

В нынешней рыночной экономике постоянно происходят изменения. Существующие рыночные отношения меняются на новые. Новая экономика известна как экономика, основанная

¹ <http://razm.info/80419>

на знании. ЭОЗ в отличии от традиционной имеет свои различия. Одно из них - это метод измерения. Существуют разные методы с помощью которых измеряют ЭОЗ и показывают её развитие. В этой статье мы представили разные методики для измерения ЭОЗ и ссылаясь на это, измеряли экономику Армении.

NAREK SARATIKYAN

ECONOMY BASED ON THE KNOWLEDGE OF FIGURES ON THE EXAMPLE OF ARMENIA

Key words: economy, knowledge economy, methodology, measurements, stable development, education, science, GDP

In the current market economics there are constantly changes. The existing market relations are changing to new ones. The new economy is known as knowledge based economy. Unlike the traditional one, it has its own differences. One of them is a method of measurement. There are different methods by which the knowledge economy is measured and show its development. In this article, we presented different methods for measuring knowledge economy and based on this, we measured the knowledge economy of Armenia.

ՄԱՐԻ ԱՏԵՓԱՆՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի հայցորդ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. կադրեր, անձնակազմի կառավարում, մարդկային ռեսուրսների կառավարում, աշխատանքային հարաբերություններ, թիմային աշխատանք, ռազմավարական ինտելեկտ

20-րդ դարում տեղի ունեցավ կադրային քաղաքականության երեք հիմնական հայեցակարգերի փոփոխություն, ինչը պայմանավորված էր հասարակության տնտեսական, սոցիալական և տեխնիկական զարգացմամբ: Անձնակազմի կառավարման հայեցակարգի պայմաններում աշխատակիցը դիտարկվում է ոչ միայն որպես աշխատանքային հարաբերությունների սուբյեկտ, այլ նաև որպես անհատականություն: Փոխվում է կադրային ծառայությունների տեղը և դերը առևտրային կազմակերպության կառավարման կազմակերպական կառուցվածքում:

20-րդ դարում տեղի ունեցավ կադրային քաղաքականության երեք հիմնական հայեցակարգերի փոփոխություն, ինչը պայմանավորված էր հասարակության տնտեսական, սոցիալական և տեխնիկական զարգացմամբ: